ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երիտասարդներ, ապագայի մեր պատասխանատու քաղաքացիներ,
Յուրաքանչյուր պետության հասարակության շարժիչ ուժը երիտասարդությունն է: Կարևորելով երիտասարդների դերը և նրանց առնչվող հիմնախնդիրները՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ՝ 2000 թվականից օգոստոսի 12-ը նշվում է որպես Երիտասարդության միջազգային օր:
Այս տոնը ոչ միայն պատշաճ առիթ է շնորհավորելու երիտասարդներին, այլև արժևորելու նրանց կարողությունները, նորարար մտածողությունը և պետության ու համայնքների զարգացման գործում ունեցած մեծ ներդրումը:
Ջերմորեն շնորհավորում եմ հայ երիտասարդներին, ովքեր աչքի են ընկնում աշխատասիրությամբ, ստեղծարարությամբ, անկոտրում կամքով ու նպատակասլացությամբ: Հատկապես ուզում եմ շեշտել մեր երիտասարդների՝ հայրենիքին նվիրվածությունը և խիզախությունը: Տասնամյակներ շարունակ հայ երիտասարդին վստահվել է ամենից բարդ, պատասխանատու, բայց և պատվաբեր գործը՝ հայրենիքի սահմանների պաշտպանությունը: Խորին հարգանքի են արժանի մեր բոլոր երիտասարդ հերոսները, որոնք անձնվիրաբար մարտնչել են հանուն Հայաստանի:
Առանձնահատուկ շնորհավորում եմ Մեղրի համայնքի երիտասարդությանը: Մեծապես կարևորում եմ ձեր ակտիվ մասնակցությունն ինչպես համայնքային կյանքում, այնպես էլ համազգային գործընթացներում: Ձեր նորարարական մոտեցումներով, գաղափարներով և գիտելիքներով է պայմանավորված մեր հայրենիքի ու համայնքների՝ ժամանակին համընթաց և կայուն զարգացումը:
Ձեր ձայնը լսելի է, ձեր ջանքերը՝ նկատելի, ձեր ներուժը՝ հուսադրող: Դուք եք մեր ինքնության պահապանն ու ապագայի կերտողը:
Համոզված եմ, որ միասին կկարողանանք կառուցել այն Հայաստանը, որի մասին երազում ենք՝ ուժեղ, արդար, խաղաղ և հպարտ:
Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:
Մաղթում եմ երազանքների հանդեպ հավատ, նպատակների իրականացման համառություն, խաղաղություն ձեր կյանքում և ձեր երկրի շուրջ: Թող ձեր ձայնը միշտ հնչի՝ վստահ, ուժեղ և արժանապատիվ: